ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«23» դեկտեմբերի 2024թ. No 14/1-Գ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԲԻԳ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ -ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/35-Ք**

Մասնակից՝ «ԲԻԳ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ

ՀՎՀՀ՝ 01070369, գործունեության հասցե՝ ք. Երևան, Դավիթ Անհաղթի փ. 11/6"

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով 21.11.2024թ. հայտարարվել է ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/35-Ք ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը, որին հայտ է ներկայացրել նաև «ԲԻԳ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովը 10.12.2024թ.-ին կայացած նիստում արձանագրել է, որ «ԲԻԳ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված փաստաթղթերը լրացված են հրավերի պահանջներին ոչ համապատասխան. մասնավորապես՝ Դիմում Հայտարարության 2-րդ հատվածը համապատասխան չէ հրավերով սահմանված ձևին:

Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան «ԲԻԳ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն չի ներկայացրել շտկված փաստաթուղթը, որի հիման վրա գնահատող հանձնաժողովի 21.12.2024թ. թիվ 3 որոշմամբ կազմակերպության կողմից ներկայացված հայտը համարվել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան և հիմք ընդունելով ՀՀ կառավարության N 526-Ն որոշման 42-րդ կետը հանձնաժողովը մերժել է «ԲԻԳ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը:

1. Եզրահանգում

Վերոնշյալ կարգավորումների համատեքստում անդրադառնալով առկա փաստական հանգամանքներին՝ պետք է արձանագրել, որ ի հակադրություն հրավերի պահանջներին՝ որպես գնման գործընթացի մասնակից հանդես եկած «ԲԻԳ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն՝ չներկայացնելով հրավերով սահմանված փաստաթղթերը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին «ԲԻԳ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ -ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ «ԲԻԳ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ -ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

12/23/2024

X

ԱՐՏԱԿ ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ

Signed by: MANGASARYAN ARTAK 2707770051 **ԱՐՏԱԿ ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ**